Ղարաբաղի դիւղացիութիւնը՝ վրդովւած քաղաքացիների փոքրոգութիւնից ու դաւաճանութիւնից՝ մերժեց հպատակւել թիւրքերին և սկսեց պատրաստւել դիմադրութեան: Շրջանը բաժանւեց 4 դինւորական մասերի՝ իւրաքանչիւրի գլխին ընտրելով մի–մի ժողովրդական հրամանատար: Ամէն կող դաւառի ու քաղաքի միջև խղւեց: Մի ժամանակ Դիգակի ու Վարանդայի գործիչները մարդ ուղարկեցին Զանգեզուր, Անդրանիկի մօտ՝ թախանձելով նրան օգնութեան հասնել:

Թիւրքական հրամանները դիւղերում չէին գործադրւում. թիւրքերի իշխանութիւնը Շուշիից և խճուղուց այն կողմ չէր տարածւում: Այս դրութեան վերջ տալու նպատակով թիւրքերը որոշեցին դիմել զէնքի և միաժամանակ վերջնագիր ուղարկեցին գանգեզուրցիներին: Հոկտ. 18–ին թիւրքական մի զօրամաս, տեղական թուրքերի և մի քանի հայերի առաջնորդութեամբ, մտաւ Վարանդայի Մամնա գիւղը, բայց հանդիպեց հայ մարտիկների ուժեղ դիմադրութեան, ջարդւեց և ամօթահար փախաւ յետ՝ հայերին թողնելով 2 թնդանօթ ու մեծ քանակութեամբ պատերազմական աւար: Ու քիչ յետոյ, հոկտ. 31–ին, դաշնակիցների պահանջով, թիւրքերը թողին Ղարաբաղն ու հեռացան:

Անդրանիկը լսելով Ղարաբաղցիների խնդիրը՝ չտապով պատրաստւեց և նոյեմբ. 16–ին չարժւեց դէպի Շուշի ու հասաւ Այգաձորը դիւղը՝ Շուշիից 40 վերստ վրա: Անդրանիկի հրամանի համաձայն, Դիգակի զինւած ուժերի հրամանատար Սոկրատ բէգ Մելիք–Շահնազարեանը պէտք է դրաւէր Քիրսի ու Սաղսաղանի դաշտերն ու Թթու ջուրը, բայց փոխանակ այդ հրամանը կատարելու՝ նա անցաւ քաղաքի մօտի Քարին–Տակ գիւղը և յարաբերութեան մէջ մտաւ քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարեանի հետ, որը հակառակ էր Անդրանիկի արշաւանքին: Մելիք–Շահնազարեանը իր և Սոկրատ բէգի կողմից նամակ ուղարկեց Անդրանիկին և կանգնեցրեց նրա յառաջխաղացումը: Նոյն ժամանակ հեռագիր հասաւ զօր. Թոմսընից, որը հրահանգում էր Անդրանիկին դադարեցնել կռիւները: Դրա վրա Անդրանիկը առաւ իր ուժերն ու քաշւեց Զանգեզուր: Նրա հեռանալուց յետոյ, թուրքերը ոչնչացրին Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած Հարար, Սալխանակաշէն և Պետրոսաշէն հայկական գիւղերը՝ աւելի ևս դժւարացնելով Ղարաբաղի և Զանգեզուրի յարաբերութիւնը:

Դեկտեմբերի սկզբին Շուշի հասաւ անգլիական դինւորական առաքելութիւնը: Այդ առթիւ ղարաբաղցիք որոշեցին յարաբերութեան մէջ մտնել անգլիացիների հետ: Դաւառի 4 շրջանների և քաղաքի մէկական ներկայացուցիչներից կազմւեց Ղարաբաղի ժամ. խորհուրդ, որը բանակցութեան մէջ մտաւ անգլիացիների հետ՝ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրութիւնը: Անգլիացիք խուսափեցին այդ հարցից՝ պատասխանելով, թէ իրենք քաղաքական լիազօրութիւններ չունեն, թէ այդ հարցով կը զբաղւեն զօր. Թոմսընից հրահանգ ստանալուց յետոյ, բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին՝ ընդունել Ազրբէջանի իշխանութիւնը: